Տեսեալ Հայոց զյայտնի հակառակութիւնս Դատաւորին՝ ազգ արարին նմա լռելեան չվարիլ այնպէս խոտորնակ և չզինիլ ընդդէմ Կայսերական հրամանին, և մի վայրապար համարել զհրովարտակն, զի դատաստանաւ եւ երկայր քննութեամբ տուեալ է։ Այլ նա յամառեալ 'ի բանս իւր ասէր՝ թէ ասա վերստին 'ի դատ մուծանեմ, գործակալքն ինձ ոչ ինչ կարեն առնել, արտաքոյ գրոց ոչ գործեմ, զի առաւել քան զամենեսին հմուտ և տեղեակ եմ. վարդապետ Մուվէլլայի և դասասաց պալատականաց առաջի Արքայի՝ և Զինակիր նորին բարեկամ ինձ, որ եւ 'ի միջնորդելոյ նորա ետուն զդատաւորութիւնս վասն գործոյս այսորիկ. նա պատուիրեալ է ինձ չխափիլ 'ի կաշառաց և չխոտորիլ յուղիղ շաւղացն գրոց Արքային չլինի հաւատարմութիւն. այլ զայս դատաստան պարտ է տեսանել օրինօք Շէրիի, և այլ սոցին նման բանք սնոտիք։ Առ որ ասացին Հայք՝ այս գործ օրինօք և դատաստանաւ վերջացեալ է, և չէ գրեալ առ քեզ վերստին դատել, ո՞ր արդեօք ընթերցեալ է ձեր՝ թէ Ս. Տեղիքն Ցունաց անկանի՝ եւ Հայոց ոչ. Դատաւորն ասէ՝ որովհետեւ դուք գործակալ բերիք՝ ես արարից զոր ինչ եդեալ եմ 'ի մտի, եւ նոքա արասցեն զոր ինչ կարեն առնել՝ մեկնեցան 'ի միմեանց։

Դատաւորն կազմեաց Ժողով 'ի Ս. Յարութիւն ('ի 22 Մայիսի) յաւուր տօնի Համբարձման Քրիստոսի, ուր էին և պաշտօնեայք Տէրութեանն. գնացին բազմութեամբ միաբանք Հայոց և Ցունաց։ Հարցին ցՅոյնս, թէ ո՞յք իցեն սեփհական տեղիքն Հայոց. նոքա ցուցանէին մի առ մի՝ Ճարտարապետն չափէր, և Նուրի Էֆէնտի գրէր, նոյնպէս և դպրապետ Դատարանի. Դատաւորն և այլք կային 'ի զննին։ Հայք ասեն. քննեսցի նաեւ թերի մնացեալ և գողացեալ տեղիքն Հայոց 'ի Ցունաց։ Աղաղակեցին Յոյնք և Դատաւորն ընդ նոսա թէ՝ չիք հրաման առ այդ յԱրքայէ։ Հայք ասեն՝ այժմ ոչ խնդրեմք զգողացեալ տեղիս մեր առնուլ 'ի Ցունաց և տալ մեզ, այլ քննել և նշանակել 'ի գիտութիւն, և յետոյ սպասել հրամանի Արքային։ Դատաւորն չմատուցեալ ունկն բանից նոցա սկսաւ կռուիլ և կազել ընդ գործակալս դրդեալ 'ի կուսակցացն Ցու-